

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 21 ՄԱՅԻՍ, 1932

ԹԻԻ 8

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հրեղեն Սիւն եւ Հայ եկեղեցիները

Տ. Ճ. Խ.

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

Ճեմարիս Երկրպագութիւնը

Մեղաւորին Յոյսը

Յաղթելու Կերպ Մը

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Ասորեստանեայց Օրով Կիլիկիա

Նոր Աշխարհը

Մարդկային Բնութիւն

Ի՞նչ Դիտենք Տիեզերքի Մասին

Նոր Հրասարակութեան մ'առքիւ

Խնդրանքս

ՀԱՅ ԿԵԱՆՔ

ՎԵՐ. Ե. ՔԱՍՈՒՆԻ

ՏՈԹՔ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

ԱՄՓ. Հ. ՓԱՆՏԵԱՆ

ՓՐՈՑ. Զ. ՊԵՋՃԵԱՆ

ՅՐ. ՎԱՍՈՅԵԱՆ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏԳԱՐԱՆ ԳՈՂԻՃ ԶԱԼԷՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, ծաւեկան բաժնեգիրն է 150 դրոշ սուրի։ Սուրիոյ համար, և մէկ ու կէս տոլար՝ ուրիշ բոլոր երկիրներու համար։

ՓԻԼԱՐՏՈՍ ՀԱՅՐ

ԳՐԵՑ՝ ԿՈՍՄԱԳԵՆԱՑԻ

Կոմմագենացիին հմուտ պատմագէտ մըն է որ գրած է հաճելի ոճով ներկայացընել անցեալի դէպքերը։ Հատորս 15 գլուխներով գեղեցիկ եւ քննական ուսումնասիրութիւն մ'է Հայոց Պատմութեան Կիլիկեան շրջանին սկզբնաւորութեան մասին։ Գիրն է 10 փրանք Սուրիոյ համար։ Կէս տոլար ուրիշ երկիրներու համար։ Ծաւալն է 95+թ. 2 էջ։ Դիմել Վնոր Աւետարեւոյ հասցէին։

ԱՄԱՌՆԱՑԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ ՄԸ

Յառաջիկայ ամրան արձակուրդի ընթացքին Յուլիս շորտէն սկսեալ՝ ուշ թը շարժուման համար, մասնաւոր դասընթացք մը պիտի բացուի Հալէպի Ամերիկեան Բարձրագոյն վարժարանին մէջ, Պաղտատ Կայարանին մօտ։

Աւանդուելիք նիւթերը պիտի որոշուին գիմողներու խնդրանքին համաձայն, որոնք կը կարծենք թէ՝ պիտի ըլլան հետեւեալները։—

1. Տարրաբանութիւն—Աշխատանոցի փորձերով
2. Բնագիտութիւն— աշխատանոցի փորձերով
3. Տարրական Կենսանաբանութիւն
4. Ուսողութիւն
5. Պատմութիւն
6. Անգլիերէն

Կը խնդրուի դիմել՝ որքան որ կարելի է՝ շո՛ւտ։

Աւելի մանրամասնութեանց համար դիմել՝ Հալէպ Գոլէճի ուսուցիչներէն Տիար Ֆարաճալահ Ազրազի, կամ Պէյրութի համալսարանին ուսուցիչներէն՝ Տիար Միւնիր Սատտէյի։

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐԻ ՄԱՏԵՆԱՇԱՐԸ

Պատանիներու ընթերցանութեան համար կրթիչ գիրքերու պակասը խիստ զգալի է։ Այս կէտը նկատի առնելով Վնոր Աւետարեւոյ խմբագրութիւնը այս անգամ հրատարակած է՝

ԲԱՐՈՑԱՎԷՊԵՐ

անուն հատորիկ մը, որ կը պարունակէ խիստ հետաքրքրական եւ բարոյացուցիչ 15 իրական պատմութիւններ և պատմածքներ։ Ամէն պատանի, ինչպէս նաև դաստիարակներ և ծնողներ շատ օգտակար պիտի գտնեն զայն։ Գիրն է 25 դրշ. սուրիական (կամ 50-սէնթ Ամերիկայի և Էգիպտոսի համար)։ Դիմել խմբագրութեան հասցէին։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

ԴՐՈՒԱԳՆԵՐ ԿԵԱՆՔԻՍ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

Տոքթ. Ա. Նազգաշեան 115՝ էջերէ բաղկացեալ այս հատորին մէջ իրեն յատուկ զուարճախօսութեամբ և սրամտութեամբ կը պատմէ իր կեանքին կարգ մը դրուագները մանկութեան շրջանէն սկսեալ մինչև հիմա։ Գիրն է Ամերիկայի համար 50 սէնթ և ուրիշ երկիրներու համար 6 ֆրանք։ Դիմել Վնոր Աւետարեւոյ հասցէին։

ՄԻԷՏԱԲԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 21 ՄԱՅԻՍ, 1932

ԹԻԻ 8

«ՀՐԵՂԵՆ ՍԻՒՆ» ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Գահիրէի մէջ հինգ տարիէ ի վեր կը հրատարակուի «Հրեղէն Սիւն» անունով հոգեւոր ամսաթերթ մը խմբագրութեամբ Տիար Բիւզանդ Կէօզիւպէօյիւքեանի: Թարգմախի խմբագիրը Կ. Պոլսոյ Բողէրթ Գուլէճի ուսումնաւարտներէն է, և վերստին ծնունդի փորձառութիւնը աւնենալէ ետքը ինքզինքը նուիրած է առաւելապէս հոգեւոր գործի: Թերթէն զատ կը վարէ նաեւ հոգեւոր լսարան մը: Իր գրութիւններէն և զինքը մօտէն ճանչցողներու վկայութիւններէն դատելով Կէօզիւպէօյիւքեան անկեղծ, նուիրեալ, մաքուր կենցաղով, անվախ ջիւղմեռանդ քրիստոնեայ մըն է: Եթէ չենք սխալիր աւետարանական ծնողքի շաւակ ըլլալով ինք յարած է Հայց. Առաքելական եկեղեցիի, մինչ իր հայրը կ'անդամակցի Գահիրէի Հայ Աւետ. Եկեղեցիի: Իր թերթն ալ յայտնի կերպով կը ցուցնէ թէ Կէօզիւպէօյիւքեան Հայ Աւետ. Եկեղեցիին տատիկ և զիտակից հակառակորդներէն է: Անիկայ կ'ծու քննադատականներ կ'ուղղէ աւետարանական հոգեւոր և կրթական գործիչներուն, եկեղեցական, կրթական հաստատութիւններուն և մամուլին դէմ: Կ'ուղղենք հոս, սակայն, յայտնել թէ Տիար Կէօզիւպէօյիւքեանի

զիրքը թէ՛ Առաքելական և թէ՛ Աւետարանական եկեղեցիներու հանդէպ սխալ է:

Աւետարանական միջավայրի մէջ սնած և աւետարանական հաստատութեան մէջ կրթուած ըլլալու հանգամանքը կարծես զինքը զրկած է Առաքելական եկեղեցին իրատեսօրէն գնահատելու կարողութենէն: Իր երեւակայութեան մէջ գծած է Առաք. եկեղեցիի մը պատկերը, որ չի համաձայնիր իրականին հետ: Անոր կը վերագրէ այնպիսի արժէքներ որոնք հոն չկան, անոր վարդապետութիւնները, անցեալն ու ներկան կը մեկնէ կէս բողոքական ըմբռնումով: Իր հասկցած ձեռով Առաքելական եկեղեցին որ կը յայտնուի իր գրութիւններուն մէջ, չենք գիտեր թէ ո՞ր դարու մէջ գոյութիւն ունեցած է: Տիար Կէօզիւպէօյիւքեան շատ անկեղծ կրնայ ըլլալ իր գաղափարներուն մէջ, բայց անոնք պէտք է համաձայն ըլլան նաեւ իրականութեան: Ահա այսպէս Կէօզիւպէօյիւքեան առանձին կը մնայ Հայ Առաքելական Եկեղեցիի մէջ: Այս պարագան յայտնի կ'ըլլայ նաեւ երբ նկատի առնենք Հայ եկեղեցականի եւ աշխարհականի անհամակիր դիրքը իրեն հանդէպ: Անշուշտ մոռցած պէտք չէ

ըլլայ «Հրեղէն Սիւն»-ի յարգելի խմբագիրը այն յուսախաբուութիւնը որուն մատնուեցաւ Լիբանանի մէջ, ուր Առաքելական Եկեղեցիի պատկանող հոգևոր եղբայրները ընդհանուր ժողով մը պիտի ունենային, բայց Կիլիկիոյ Կաթողիկոսութեան արգելքին վրայ չիրականացաւ իրենց այս ծրագիրը:

Տիար Կէօղիւպէօյիւքեանի դիրքը Հայ Աւետ. Եկեղեցիի հանդէպ ալ իրականութեան հակառակ հիմի մը վրայ հաստատուած է: Կէօղիւպէօյիւքեան Հայ բողոքականութեան մէջ միայն «գեղեցիկ վարժութիւններ» կը գտնէ, — աղօթել, Ս. Գիրք կարդալ, Կ. Դպրոց և հոգևոր լսարաններ հաստատել, քաղաքավար եւ զուսպ լեզու գործածել ևայլն: Բայց Հայ բողոքականութիւնը սեղանի վրայ դրած հերետիկոս ըլլալ կը նշանակէ իրեն համար: Արդիապաշտութիւն եւ բողոքականութիւն նոյնանիչ եզրեր են: Աւետարանական բեմը, մամուլը, գպրոցը ուղղափառ Աւետարանը չէ այլ բարոյականութիւն մը կը քարոզեն: Հայ բողոքականութիւնը ամբողջութեամբ բանապաշտ է, քրիստոնէութեան մէջ աստուածային տարրը գրեթէ կ'անտեսէ, Քրիստոսի աստուածութիւնը գրեթէ կը մերժէ, եւայլն: Կէօղիւպէօյիւքեան կ'երեւի թէ իր աչքերը մեծ չէ բացած իրականութիւնը տեսնելու համար:

Պէտք է ըսել թէ արդիապաշտութիւնը յարանուանական շարժում մը չէ: Քրիստոնէական գրեթէ ամէն եկեղեցիի մէջ կը տեսնուի ան, որուն հակադրելու համար կազմակերպուած է բողոքականներու մէջ հիմնապաշտ զօրաւոր հոսանք մը: Իսկ Մերձաւոր Արեւելքի Հայ բողոքական եկեղեցիին դաւով ան շատ հեռի է արդիական ըլլալէ: Բոլոր բողոքականութեան մասին ընդհանուր բացարձակ վճիռ մը արձակել կարենալու համար ամէն տե-

ղական եկեղեցիի ներքին կեանքը, անոր վարչներուն և մանաւանդ քարոզչիներուն կեանքն ալ խօսքը մօտէն տեսած լսած պէտք է ըլլալ, ինչ որ կը պակսի Կէօղիւպէօյիւքեանի: Հետեւաբար իր քրակումները արժէքէ զուրկ են:

Իր երեւակայութեան մէջ գծած արդիապաշտ բողոքականութեան դէմ քրիստոնէական կամ աւելի ճիշդը աղանդամթական նախաձայնողութիւնը Կէօղիւպէօյիւքեանը մղած է հակաքաղաքավարական քրակումներով արտայայտուելու քրիստոնեայ եկեղեցիի մը մասին: Մենք չենք կրնար հասկնալ թէ Քրիստոսը սիրող մը ի՞նչպէս կրնայ բողոքական պատուելիները նախանձոտ, մատնիչ, թոյն ժայթքող, ոճրագործ կռիւ, իբր թէ պատերազմի օկիդը Յոյն աւետարանիչ Ուրալումպօսի սպաննումը թուրք Կառավարութեան կողմէ Հայ բողոքական պատուելիներուն գործն է: Անշուշտ սխալ տեղեկատուութեան մը զոհ դացած է «Հրեղէն Սիւն»-ի խմբագիրը, որ կը յուսանք թէ չպիտի ուշանայ իր գրածը հերքելէ, ինչ որ կ'ակնկալենք իր անկեղծութենէն:

Եթէ Տիար Կէօղիւպէօյիւքեան իր տեսութիւններուն մէջ իր գեղեցիկ դաւաճարականին հետ քիչ մ'ալ իրատեսութիւն խառնէր, իր ուղղափառ ջիւրմեռանդութեան քիչ մ'ալ լայնախոհութիւն միացնէր, իր դատումներուն և գնահատումներուն մէջ սխալ եզրակացութեան չպիտի յանգէր, աւետարանականութեան և սխալ ըմբռնուած առաքելականութեան խառնուրդ մը չպիտի բաղադրէր, չպիտի չափազանցէր, և սխալ և տնհարկի որակումներով չպիտի արտայայտուէր, և իր աւետարանչական գործը, խաչեալ Քրիստոսով փրկութեան քարոզութիւնը, աւելի արդիւնաւոր պիտի ըլլար:

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ՃԵՄԱՐԻՏ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ

«Աստուծոյ երկրպագութիւն ըրէ»:
Յայտ. 22. 9:

Անոնք որ «Բարեխօսութեան Գաղտնիքը» անուան գրքայի կարգացած հնմէկէ աւելի անգամներ անպատճառ սա հարցումը ըրած պիտի ըլլան. «Ինչո՞ւ աղօթքը և բարեխօսութիւնը աւելի մեծ ուրախութիւն և հաճոյք մը չեն ըլլար. ստոր պատճառը ի՞նչ կրնայ ըլլայ»: Եւ ուէ միջոց մը կա՞յ որով մենք աւելի յարմար վիճակի մը մէջ կը գտնուինք Աստուծոյ հետ յարաբերութիւնը մեր գլխաւոր եւրախութիւնը ընկալել, և իբր բարեխօսներ Անոր ոյժն եւ օրհնութիւնը իջեցնելու անոնց վրայ արոնց համար կ'աղօթենք»:

Այս հարցումը մէկէ աւելի պատասխաններ կրնայ ունենալ: Բայց գլխաւոր պատասխանը անկասկած սա է. Մենք շատ քիչ գիտենք զԱստուծո: Մեր աղօթքին մէջ չենք սպասիր Անոր ներկայութիւնը իբր գլխաւոր բան՝ որուն վրայ հաստատուած է մեր սիրտը: Բայց իբր գլխաւոր բան Անոր ներկայութիւնը ազնկալելու ենք: Մենք ամէնէն աւելի մեր մասին, մեր պէտքին, մեր տկարութեան, մեր փափաքին և աղօթքին մասին կը խորհինք: Բայց մենք կը մոռնանք որ ամէն աղօթքի մէջ Աստուծո պէտք է ըլլայ Առաքինը և Ամենը: Չայն փնտռել, զԱյն գտնել, Անոր ներկայութեան մէջ մնալ, վստահ ըլլալ թէ Անոր Ներկայութիւնը մեր փրակն է հանգի, թէ Ան իրապէս կը լսէ ինչ որ մենք կ'ըսենք, և մեր մէջ կը գործէ, ահա միայն այս մեզի կուտայ այն ներշնչումը՝ որ աղօթքը մեզի համար այն-

քա՛ն բնական և զիւրին կ'ընէ որքան մանուկի մը իր հօրը հետ աւելցած յարաբերութիւնը:

Ինչպէ՞ս մէկը կրնայ այսչափ մօտենալ Աստուծոյ և Անոր հետ այսպէս յարաբերիլ: Պատասխանը պարզ է. Մենք Աստուծոյ ժամանակ տալու ենք ինքզինքն մեզի ճանցցնելու համար: Բոլոր սրտովդ հաւատա արդուն ինքզինքդ իբր խնդրարկու ճիշդ ինչպէս որ կը ներկայացնես Աստուծոյ, այնպէս ալ Աստուծո իբր աղօթքի Լսող կը ներկայացնէ ինքզինքն քեզի: Բայց դուն ասոր իրականութեան չես կրնար վերահասու ըլլալ՝ եթէ դուն Աստուծոյ ժամանակ և հանգիստ չես տար: Բու աղօթքիդ այժմ բառերու շառաւթեան կամ ջերմեռանդութեան մէջ չի գտնուիր, այլ այն կենդանի հաւատքին մէջ թէ Աստուծո ինքն քեզ և քու աղօթքդ իր սիրող սրտն անց կ'առնէ: Նա ինքը քեզ պիտի վստահեցնէ թէ իր ժամանակին մէջ քու աղօթքդ պիտի լսուի:

Աստուծոյ առջեւ գալու ատեն միտքըդ առ սա խօսքերը:

«Ո՛վ Տէ՛ր, Բե՛ռի Կէ ԲԱՐՁՐԱՑՆԵՄ ԻՄ ՀՈԳԻՍ»: Անոր առջեւ լուռ խոնարհէ, հաւատալով որ Ան քեզի կը նայի և պիտի յայտնէ իր ներկայութիւնը:

«ԻՄ ՀՈԳԻՍ ԾԱՐԱԻԻ Է ԱՍՏՈՒԾՈՅ ԿԵՆԴԱՆԻ ԱՍՏՈՒԾՈՅ»:

Էնտրիւ Մըրէյի
«Երկրպագութեան Գաղտնիքը»
Գրքէն Թարգ.

ՄԵՂԱՒՈՐԻՆ ՅՈՅՈՒՐ

Անգլիոյ մէջ գործաւոր մը մեծապէս կը տառապէր աչքի ցաւէ մը: Նշանաւոր բժիշկի մը զիմեց, որմէ հասկցաւ թէ իր աչքերուն մէջ վարագոյլներ (cataract) յառաջ գալու վրայ են, թէ միակ ճամբան գործողութեամբ մը զա-

նոնք վերցնել էր: Գործաւորին նաեւ յայտնելէ ետքը թէ պէտք էր այսինչ տոքթորին երթալ՝ աւելցուց. «Հետդ առատ դրամ առնել մի մոռնար, քանի որ ան շատ դրամ կը պահանջէ:» Գործաւորը 20 ասկի ունէր դրամատուէն, բոլորն ալ քաշեց և մեծ բժիշկը տեսնելու գնաց: Մասնագէտ բժիշկը ահօր աչքը քննելէ ետքը ըսաւ. «Բո՛ւ բժիշկիդ օխտաճանաչութիւնը չիտակ է: Ես քեզ կրնամ բժշկել, բայց այս դրամանումը քեզի պիտի արժէ 105 ասկի:»

«Ուրեմն,» ըսաւ գործաւորը, «Ես պիտի կ'ուրանամ, քանզի ես միայն 20 ասկի ունիմ:»

«Դուն չես կրնար իմ պայմաններս ընդունիլ,» ըսաւ մասնագէտը, «Շէ՛տ ևս կրնամ քու պայմաններդ ընդունիլ: Բայց երրորդ ճամբայ մ'ալ կայ. ես գործադուծիւնը ձրի պիտի կատարեմ:»

Մեղաւորի յոյսը ահա ասօր մէջ կը կայանայ: Փրկութիւնը Աստուծոյ շնորհքն է, ամէն մարդ կրնայ ստանալ խաչեալ Յիսուսի հաւատալով:

ՅԱՂԹԵԼՈՒ ԿԵՐՊ ՄԸ

Վեր. Գ. Ֆ. Էնտրիւզ երկու տարի առաջ Պոստոնի Ս. Երրորդութիւն եկեղեցիին մէջ պատմած է հետեւեալը. —

«Հնդկաստանի Վիքոմ գիւղին մէջ տաճարներու քովէն անցնող ճամբայէն երթեկեկ արգիլուած էր անհպելի կոչուած Հնդկներուն: Կարգ մը լուսաւորեալ Պրահմիններ ուղեցին այս աւանդական արգելքը վերցնել: Օր մը Պրահմինները և անհպելիները քով քովի թափօր մը կապած ուղեցին այդ ճամբէն անցնիլ: Ուղղափառ Պրահմինները իրենց դասակիցները անհպելիներու մէջ տեսնելով զայրացան, եւ բոլորին վրայ յարձակելով խոչտանդեցին: Յաջորդ օրը սակայն տողանցքը

կրկնուեցաւ. և տողանցքի մասնակցողները դարձեալ ծեծուեցան: Ասիկայ շարունակեց ատեն մը: Պրահմինները կառավարութեան իմացուցին: Ոստիկանները անաստողները ձերբակալելով բանտը դրին: Յաջորդ օրը աւելի մեծ բազմութեամբ եկան ճամբայէն անցնելու: Ոստիկանները ասկէ ճաւահատ չղթայ կազմեցին ճամբուն երկու ծայրերը՝ անցքը արգիլելու համար: Անհպելիները եւ Պրահմինները երկու խառն թափօրներ շինեցին, որոնցմէ մէկը մինչև կէսօր, և միւսը կէսօրէ մինչև իրիկուն վեցական ժամ, ոստիկանական չղթայի առջև աղօթելու ձևով լուռ կեցան: Ուղղափառ Պրահմինները տակաւին հրքեմն կը ծեծէին, բայց տակաւ առ տակաւ անոնք սկսան ամչնալ, եւ գիւղացիները տողանցքի մասնակցողները աւելի ու աւելի սիրեցին:

Անձրեւոտ եղանակը եկաւ, ցած փողոցին մէջ ջուրը լճացաւ: Ոստիկանները հարթ յատակով նաւակները մըտան, իսկ արգելքի դէմ ընդվզողները նախ մինչև իրենց ծունկը ապա մինչև իրենց վիզը ջուրին մէջ կեցան լուռ աղօթքի ձևով: Շատերը ցկեանս իրենց առողջութիւնը կորսնցուցին մինչև որ հեղեղը անցաւ: Վերջապէս տարի մը եւ 4 ամիս ետքը ուղղափառ Պրահմինները տեղի տուին, ոստիկանները ճամբեցին և ըսին. «Մենք ալ չենք կրնար դիմանալ, կրնաք ճամբէն անցնիլ:»

Բոլոր Հնդկաստան մեծ հետաքրքրութեամբ հետեւեցաւ այս պայքարին: Ասոնց քաջութիւնը և առանց դիմադրելու տարած յաղթանակը անհպելիներու առջև ոչ միայն արգիլեալ ճամբան բացին, այլ նաեւ հարաւային Հնդկաստանի մէջ բոլոր ճամբաները:»

Ոչ—դիմադրութիւն, չարիքը չարիքով չփոխանակել,—ահա յաղթութեան զաղտնիքը:

ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՅ ՕՐՈՎ ԿԻԼԿԻԱ

(Շարունակութիւն ճախորդ քիւհն)

Արեւելքէ արեւմուտք առեւտրական գլխաւոր ճամբաներուն տիրանալու մասին Թագաւթփալասար Ա. ի ծրարագիրն այսպէս յաջողութեամբ ի զլուստարին Թագաւթնինիպ, Աստուծոյ զիրպալ Գ. ու մանաւանդ Սալմանասար Բ. : Վերջինս Փիւնիկէի ծովեզերքը Ասորեստանեայց պետութեան կցելէ զատ, Կիլիկիան ալ նուաճեց, և տիրեց Կիլիկեան Դրանց առջև կեցող Տարսն քաղաքին : Ուստի կ'երեւի թէ առաջին անգամ ըլլալով Սալմանասար առեւտրական հաղորդակցութիւն հաստատեց Լիւդիոյ Թագաւորութեան հետ, որ արեւմտեան Փոքր Ասիոյ մէջ կարեւորութիւն ստանալ սկսած էր : Նոյնպէս Սալմանասար էր որ Կոմմագենէի ու Կապպադոկիոյ մէջ խնտացեաց և Մոսորեսանց ոյժը կոտրեց և Արեւելեան Տաւրոսի լեռնանցքներն ապահովեց Ասորեստանեայց ռազմական գործողութեանց հեռաւոր ձեռնարկներուն համար : Այս շրջանէն սկսեալ Ասորեստանեայց գեղարուեստը հզօրապէս կը ներգործէ հիւսիսային Սուրիոյ և Կիլիկիոյ կեղծ-Հատեան քաղաքակրթութեան վրայ :

Երբ Սալմանասար վերջապէս Կիլիկիոյ նուաճումն ի գլուխ հանեց՝ արդէն ծերութեան տկարութիւնները զինք պաշարել սկսած էին : ուստի այնուհետև բանակներուն գլուխն ինք չէր անցնէր, հապա զանոնք Դայանասուր անուն սպարապետին հրամանատարութեամբ կը ղրկէր արշաւանքի : Սալմանասարի երկացոյն որդին Ասուրդանիսպալ (Սարգանաբալու) նախանձելով Դայանասուր սպարապետին վայելած բացառիկ պատիւներուն, և

գուցէ կարծելով թէ դժուար պիտի չըլլար ծեր ու տկարակազմ հօրը ձեռքէն կորզել մականը, ապստամբութեան դրօշը պարզեց (Ք. Ա. 827ին) : Իր կողմը բռնեցին պետութեան ամենամեծ ու նշանաւոր քաղաքներէն քսանեօթը, ընդ որս նաև Կիպրոսնա (Կարիոոս), որ ինչպէս տեսանք՝ Կիլիկիոյ մէջ էր Սիսի մօտ : Ասորդանիսպալ իսկոյն Թագաւոր հռչակուեցաւ : Այս ահաւոր ճգնաժամին մէջ Սալմանասար օգնութեան կանչեց իր երկրորդ որդին՝ Սալմապիսպը, որ անմիջապէս բանակին հաւատարիմ մնացած մասին գլուխն անցնելով՝ ասպարէզ իջաւ : Բայց կարելի չեղաւ կարճ միջոցի մէջ մարել ապստամբութիւնը, որ տակաւին կը շարունակէր՝ երբ 824ին Սալմանասար Բ. մեռաւ : Հազիւ 822ին կարելի եղաւ վերջ տալ այս ներքին պատերազմին : Ասորդանիսպալ երբ բոլորովին յօյսը կորեց յաջողութենէ, իր պալատին կրակ տալով՝ մէջն այրեցաւ :

Այս մարդը մէկէ աւելի տեսակէտներով շահեկան է մեզի համար : Նախ, կ'երեւի թէ նա իր հօրը կողմէն փոխարքայ կարգուած էր Արեւմուտքի, թերեւս յատկապէս Կիլիկիոյ : Ատոր իբրեւ մէկ ապացոյցը կրնանք ընդունիլ Կիպրոսնա քաղաքին մասնակցութեան այս ապստամբութեան եւ հաւանական սեպել թէ այդ քաղաքն իսկ էր Ասորդանիսպալի պատերազմական գործողութեանց խարիսխը : Ուրիշ ապացոյց մը մեզի կ'ընծայէ հին աւանդութիւնը թէ Սարգանաբալու հիմնեց Կիլիկիոյ Տարսն քաղաքը : Մտապերօ կը կարծէ թէ (Ք. Ա.) է. դարուն մէջտեղերն Ասորբանիսպալ Թագաւորին ձեռքով եղած

նորագութեան մը կը նայի այս աւանդութիւնը: Բայց ինչպէս արդէն ճորճ Ռօլինսըն նկատած էր իրաւամբ, Սարդանաքոյր թէ՛ անունով, թէ՛ իրեն վերագրուած կանուխ թուականով, և թէ նոյն իսկ իր աւանդեալ վախճանովն աւելի Ասուրդանիկայի կը համապատասխանէ քան թէ Ասուրքանիկայի: Ուրիմն մեր կարծիքն այն է թէ Ասուրդանին պալ իր փոխարքայութեան միջոցին (և հարկաւ Ք. Ա. 833 թուականէն ետքը) նորագապէս վերաշինած ու զարդարած է Տարսոն քաղաքը: Երկրորդ, հիւսիսային Ասորիքի և Կիլիկիոյ վաճառաշահ քաղաքներուն մատուցած նպաստին շնորհիւ էր որ Ասուրդանին պալ կրցաւ հինգ տարի յամառօրէն մաքառիլ իրեն զէմ ճակատող Ասորեստանի պետութեան ուժերուն հետ: Երրորդ, թէեւ Ասուրդանին պալ վերջապէս ընկճեցաւ իր եղբորը գործածած գերակշիռ զօրութեան առջեւ, սակայն հիւսիսային Ասորիք և Կիլիկիա գտնէ Սամսիադադի ամբողջ իշխանութեանը միջոցին (մինչեւ 811) ազատ էր Ասորեստանի գերիշխանութենէն, որովհետեւ յիշեալ թագաւորն իր բերնով կը խոստովանի թէ իր պետութիւնը վերահաստատել յաջողեցաւ զէպի արեւմտեք մինչեւ Տիլ-Բարսիպ (Պիրէճիք) միայն՝ Եփրատի վրայ: Իր արդին ու յաջորդը Ադադնիրարի Գ. ալ մինչեւ Ամանոս միայն կրցած է հին սահմանը լայնցնել, որով ամէն իրաւունք ունիլ խորհելու թէ 80 տարի շարունակ ոչ միայն վերին Կիլիկիա, այլ նաեւ Դաշտային Կիլիկիա ազատ էր Ասորեստանէն: Բայց հարստահարութիւններէն:

Բայց սոյն միջոցին արիւղ զօրաւոր պետութիւն մը երեւան եկաւ հիւսիսէն, որուն զօրութեան առջեւ Կիլիկիա ըստիպուեցաւ գլուխ ծռել. այս է Ուրարտու կամ Արարատ, որու մայրաքաղաքն էր Տուսքա (Վան): Ուրարտուի հզօր

թագաւորներէն Մենուա արդէն Ն. Ք. 800 էն քիչ ետքը Եփրատն անցած էր, և Մալաթիոյ թագաւորն իրեն հպատակ ու հարկատու դարձուցած, Մենուասի որդին Մեծն Արգիստիս Ա. (784-761) ոչ միայն կրցաւ Մալաթիոյ թագաւորութիւնն իր հպատակութեան տակ պահել, այլ նաեւ Կիւրինէ զէպի Կիսարիա տարածուող Մորիմինէ և Քամամանինէ երկիրները նուաճել և այսպէս փոքր Ասիոյ կեդրոնէն անցնող ու մինչեւ Լիւդիա երկարող առեւտրական ճամբան տիրանալ: Արգիստիսի յաջորդը Սարդուրիս Բ. (761-734) Մալաթիոյ ապստամբող թագաւորը դարձեալ հնազանդութեան բերաւ, և ասկէ վաս, Մալաթիոյ օգնութեան փութացող Կիլիկիոյ թագաւորներուն յաղթելով, ատենօք Թագաւորիպալատար Ա. ի գործածած ճամբէն արշաւեց մինչեւ Կուէի երկիրը: Այս շրջանին Ապառաժօտ Կիլիկիոյ ծովեզերքը յատկապէս Յաւան անունը կը կրէր (Եգէկ. Ի. 19) հոն հաստատուած բազմաթիւ Յոնիական գաղութներուն պատճառաւ: 1916 ին երբ Փրօֆ. Ն. Մարր պեղումներ կը կատարէր Վանի մօտակայքը, քարայրի մը մէջ Խալդիներէն արձանագրութիւն մը գտաւ, որուն մէջ կը յիշուի Դիուքի-ճի (Դիոգինէս) անուն Յաւանի թագաւոր մը, որ Սարդուրիս Բ. ին հարկ վճարած է: Ուրարտուի թագաւորն ապա Ալպիսթանէն Մարաշ տանող ճամբով հիւսիսային Սիւրիա իջաւ և գրեթէ մինչեւ Որոնդէօի ակունքը բոլոր այդ իշխանութիւններն Ուրարտուի պետութեան հպատակեցուց:

Այս էր Արեւմտեան Ասիոյ քաղաքական ընդհանուր կայութիւնը՝ երբ Ն. Ք. 745 ին Թագաւորիպալատար Դ. Ասորեստանի գահը ելաւ: Անմիջապէս իրեն և Սարդուրիսի միջեւ կենաց ու մահու պայքար մը սկսաւ, յորում վերջինս չարաչար յաղթուեցաւ: Կոմմագենէի

մէջ պատահած վճռական մեծ ճակատամարտին (743) Սարգուբիսի զինակիրներն էին Արփատի Մասիկ Ագուստան իշխանէն զատ, Բարքամիւսի, Շամալի (Ձէնճիրլի), Գուրգուսի (Մարաշ), Կուսմուսի (Պէնէնի) և Մալաթիոյ թագաւորները։ Իրբ Թագաւթփալասար նախ 739 ին Խատտինայի (Ամըզ) և ապա 738 ին Եսաուդիի թագաւորութիւնները կործանեց, ու վերջնոյն մայրաքաղաք Կուլլանիի կամ Բաղանէի մէջ իր առջեւ հրաւիրեց իրեն հպատակող թագաւորները, հոն իրենց հարկերը մատուցին յաղթականին ոչ միայն վերջիշեալ թագաւորները, հապա նաեւ Կուէի Ուրիքը, Տաբալու Վասուրմին, Կասկայի Դադիդն, Խուրիշնայի Ուրիվիլն, Տունայի Ուշիդիլն, Տուհանայի Ուրպալիան եւ Իշտուեղայի Տուհանիլն, այսինքն՝ Ալպիսթանի արեւելքէն մինչեւ Իկոնիոնի մօտերը բոլոր երկիրներուն իշխանները։ Ասոնց բերած տուրքերն ու ընծաներն ալ շատ հետաքրքրական են։ — Սակի, արծաթ, անագ (կամ կապար), երկաթ, փղեղրու (կամ կինճերու) մաշկեր, փղօսկր, գոյնզգոյն գործուած հանդերձներ, քթանէ կտաւ, ծիրանի ու մանիշակագոյն ներկուած կերպասներ, երեսոսի փայտ ու ճանդան, այլեւայլ թանկագին առարկաներ, արքայական գանձեր, գէր գառնուկներ, շիկակարմիր ներկուած ոչխարի սեկ, գոյնզգոյն գեղեցիկ թռչուններ, թռչունի փետուր, ձիեր, ջորիներ, առջառու խաշինք, ուղտեր, մատակ ուղտեր իրենց ձաքերով։ Ասիկայ կրնայ, մեզի ներկայացնել այդ ընծայաբեր երկիրներուն մշակութային և տնտեսական մակարդակը։ Երբ 732 ին Թագաւթփալասար կործանեց Ասորեաց թագաւորութիւնն ալ և անոր մայրաքաղաքին Դամասկոսի մէջ երկրորդ դարպաս մը կապեց, հոն ալ ներկայացած աւելի բազմաթիւ հարկատուներու ցանկին մէջ նո-

րէն կը հանդիպինք վերեւ համարուած միեւնոյն Կիլիկեան թագաւորներուն։ Ուշադրութեան արժանի է որ Խիլակու անունը բնաւ չի յիշուիր այս հպատակաց ցանկերուն մէջ։ Մասպերօ այս երեւոյթն անով կը մեկնէ որ կրկին ցանկերուն մէջ Խուրիշնա անունը (զոր Կիպչունա անուան մէկ ուրիշ ձեւը կը սեպէ) հաւանօրէն կը կենայ Խիլակու անուան տեղ. արդէն տեսանք թէ Կիպչունա անունը դասական Կաբեսոս անուան կը համապատասխանէ, և այս անունով քաղաքը, Սիսի մօտերը, կեդրոնն էր անշուշտ արդի Գօզան կոչուած ամբողջ գաւառին ու թերեւս Սարոս գետին աւազանին ալ։

Տաբալի արքան Վասուրմի, զուցէ Ուրարտուի վեհապետին զրդուածով, 731 ին կամ անկէ քիչ հետքը, ապստամբեցաւ Թագաւթփալասար Դ. ի դէմ, որ անոր վրայ զրկեց իր սպարապետը։ Ասի Վասուրմին գահէն ձգելով, տեղը նստեցուց Հուլլի անուն մէկը հասարակ ժողովուրդէն։ Այս միակ բացառութեամբ Անտիտարտի ու Տաւրոսի հանձնական, Կիլիկեան և Լիւկիական ծագումէ վերոյիշեալ բոլոր իշխանութիւնները կ'երեւի թէ Ասորեստանի հպատակ մնացին մինչեւ Սալմանասար Դ. ի վերջին տարին (ն. թ. 722)։ Բայց այդ տարին, մինչ Ասորեստանի բանակները սատիկ զբաղած էին Պաղեստինի մէջ, նոր խլրտումներ յառաջ եկան Կիլիկիոյ այլեւայլ մասերուն մէջ ու շրջակայքը։ Կեդրոնական Փօքր-Ասիոյ հրգոր իշխաններէն մէկը, զոր Ասորեստանի Սարգոն թագաւորն իր տարեգրութեթիւններուն մէջ յաճախ կը յիշէ «Մուշկիներու թագաւոր Միսա (կամ Միսասի)» անունով, բայց որ հաւանօրէն Փուլգիոյ Միդաս թագաւորն է, այդ միջոցին մեծ արշաւանք մ'ըրաւ դէպի Կիլիկիայ ու հասաւ մինչեւ Կուսմուսի (Պէնէնիի մօտերը)։ Այսուհետեւ թագ-

լաթփալթասար Դ. ի հարկատուաց ցանկերուն մէջ երեւցող կիլիկեան իշխանութեանց անունները մէկէն ի մէկ կ'անհետանան, որմէ կարելի է բնականօրէն հետեւցնել թէ Մուշկի թագաւոր Միտա անունով յիշուող այդ կորովի աւազակապետը աշխարհակալը ջնջած է այդ իշխանութիւններն աւանդեց երկիրները կցած իր պետութեան: (She Garstang, *The Hittite Empire*, pp 16-18). Քիչ յետոյ կը տեսնենք թէ մինչեւ անգամ եփրատի վրայ Քարքամիւս (Ճարպալուս) քաղաքին թագաւորը Պիսիտիս կը դաշնակցի այս Միտային հետը, որ միանգամայն դաշնակիցն էր Ուրարտուի Ռուսաս Ա. և Արգիստիս Բ. թագաւորներուն յաջորդաբար: Սարգոն, որ այդ տարին տակաւին սպարապետն էր Աստ-

րեստանի Սալմանասար Դ. թագաւորին, կիլիկիա զրկուեցաւ մեծ ու զօրաւոր բանակով մը, եւ մղեց Միտան. ապա Տաբալի Հուլի թագաւորը, զոր Միտա փախցուցած էր, վերահաստատեց զահուն վրայ: Խիլակու երկիրն ալ տըրուեցաւ Հուլիի որդւոյն Ամրատիշի: Շատ չանցած միւսու Սալմանասար Գ. և Սարգոն ինքը բազմեցաւ Նինուէի թողին վրայ: Այդ միջոցին վախճանեցաւ նաեւ Հուլի. աւստի Սարգոն Խիլակուի Ամբարիշը Տաբալի բուն երկիրն ալ թագաւոր կարգեց, ասկէ զատ իր մէկ դուստրն ալ անոր հետ ամուսնացուց, ինչ որ բացառիկ շնորհ մըն էր:

ԵՂԻԱ Ս. ՔԱՍՈՒՆԻ
(Շարունակելի)

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԸ

Փոքրիկ տղայ մը կը հարցնէ. «Հայրիկ, ի՞նչ է պատերազմը»: Այս հարցումը իր մէջ կը բովանդակէ ամէն ինչ՝ Մեր նորահաս սերունդին համար վերջոյող պատերազմը իր բոլոր արհաւիրքներով պարզ հեկեաքներ դարձեր են:

Տասը տարուան խաղաղութիւնը բաւական ջնջած է այդ մեծ աղէտի արիւնները: Պատերազմի տեսանելի նշանները անհետացած են: Բայց տնտեսական վէրքերը կ'արիւնոտին: Պատերազմի մասնակցող Եւրոպական ամէն ազգ կը կքի տնտեսական ծանր լուծին տակ:

Ի՞նչ է այս յետպատերազմեան նոր աշխարհը:

Պարտքի և հատուցման դժուարութիւնները թէպէտ մեղմացած կը թուին բայց իրականութեան մէջ միայն վճարումի ժամանակը փոխուած է: Ներկայ սերունդի թողած թողը, մինչև որ

ծերանայ, պարտքի տակ ընկճուած պիտի մնայ:

Ծանր տուգանք կը նշանակէ ծանր հարկ և մաքս, հետեւապէս՝ ազգերու մէջ ձգտում և ատելութիւն:

Այս կարծեցեալ Նոր Աշխարհին մէջ կասկած ու ատելութիւն տակաւին կը տիրէ: Կը կարծէք թէ զինադադարի միջոցին ազգերու միջեւ նոր գծուած սահմաններէն թիզ մ'անցած ազգերու գոհունակութեան արժանացած է: Բնական է որ նախանձոտ աչքերով կը նային խնժորը յափշտակողներուն վրայ: Աշխարհի խաղաղութեան մթնոլորտը կը մթափնի:

Կրօնական հարցերը, որ այժմ նոր Աշխարհի մէջ մեզ կը գիմարաւեն, չեն երբեք նախորդ մեզի ծանօթ հարցերը: Կան տեղեր ուր բացարձակ անտարբերութիւն սկսած է տիրել: Քրիստոնէական հաստատութիւնները քիչ չատ

կրցե՛ր են վերստանալ իրենց բնականոն վիճակները: Բայց քննելու, հարցու-
փորձելու զօրաւոր ոգի մը կը տիրէ ա-
մէն կողմ, նախնաւանդ ճշմարտութիւն եւ
իրականութիւն կը փնտռուի կրօնքի մեջ:
Իսկ միւս կողմէն եկեղեցիները՝ երբեմն
Քրիստոսը զանգակատուններուն մէջ
բանտարկած՝ իրենց ուղած կերպով կը
վարեն գործերը, կարծես Յիսուսի ա-
ռաջնորդութենէն կը վախճան:

Շատ քիչեր կրնան թափանցել Մայ-
րազոյն Արեւելքի այդ միտքիկ դեղին
զանգուածներու մտայնութեան: Ո՞վ
գիտէ . . Սովիէթ ուժի ներգործութեան
տակ այն՝ քրքա՛ն սպառնացող զօրու-
թիւն մը կրնայ դառնալ ճերմակ ցեղին
դէմ: Յամենայն դէպս, մարդկային
ճակատագրի վրայ մեծ դեր խաղացող
ազդակ մը պիտի ըլլայ ան:

Մէկ կողմ քաշուելով, կղզիացեալ
վիճակ մ'առնելով կարելի չէ ազատ-
ուիլ եւ ինքզինքը ապահով գգաւ: Ա՛յ
անցած են բերդի, պարիսպի, ամրոցի
եւ խրամի չըջանները: Կրնայ քարտէս-
ներու վրայ գծուած տեսնել ազգերու
սահմանները: Կրնան թերեւ թելերով,
պատերով, նշաններով, գիտերով եւ
լեռնաշղթաներով սահմանել ազգերու
սահմանները: Բայց թողոք մեքենանե-
րու հրասքանչ գիւտերը միանգամ ընդ-
միշտ ջնջած են սահմանները: Անգամ
մը երեւակայէ. անթափանցելի վայրի
անտառներու եւ լեռներու վայրենիները
մի քանի ժամէն կրնան քաղաքակըր-
թութեան սրտին մէջ իջնել երկինքէն:
Ազգեր, լեզուներ, այլապան ժողո-
վուրդներ անթել հեռագրով եւ հեռա-
ձայնով իւրաբու միացած են: Թօքիոյի
մէջ երկրաշարժ մը, նոյն վայրկենին
իր ազգեցութիւնը կ'սկսի ունենալ Բա-
րիլի, Լոնտոնի, Նիւ Յորքի նման բազ-
մամիլիոն քաղաքներու տնտեսական
վիճակին վրայ:

Մարդ մը ինչպէս որ ինքնիրեն հա-

մար չ'ապրիր, նոյնպէս ալ ազգ մը չի
կրնար ինքնիրեն համար ապրիլ: Չէ՞ք
յիշեր, 1914 ին մարդասպանի մը ատը-
ճանակը ամբողջ աշխարհը կրակի տուաւ:
Ինչո՞ւ չհաւատաս թէ հիմա ալ մոլե-
ռանդ մը կրնայ իր ձեռքի ջանք թաթ-
խել աշխարհի վառօթի տակառներուն
մէջ:

Հաղորդակցութեան եւ փոխադրու-
թեան նոր միջոցները, անթել հեռագիրն
ու օդանաւը, կրնան վայրկենական
շարժման մէջ դնել ժողովուրդներու
հսկայ. զանգուածներ: Լինողէրկ մը
Նիւ Յորքէն Փարիզ կը թռչի, մէկ ժամ-
ուան միջոցին բոլոր աշխարհ կ'սկսի
զայն ծափահարել: Դեռ արեւը մարը
չմտած քաղաքակիրթ աշխարհի բոլոր
ոստիկանները ոճրագործ մը հետապնդե-
լու կոչ կ'առնեն անթել հեռագրով:

Չար ոգի մը արդիական այս միջոց-
ներով կրնայ աւերներ գործել, սպան-
դանոցի վերածել աշխարհը:

Այս կացութեան առջեւ մարդ կա՛մ
յոռետես կամ ալ լաւատես կրնայ դառ-
նալ: Մր. Կարվին 1926ի զինադադարի
օրուն մէջ ըսաւ. «Թէպէտ հազարամ-
եակի հասած չենք, բայց երբեք չէր ե-
ղած այսքան հաստատ պատուանդան
մը խաղաղութեան համար... այս ժա-
մուս արեւմուտքի վերջալոյսը չէ, այլ
ծագող արշալոյսի մը շուրջ վարդազոյն
ամպերու ցուքերն է որ կը տեսնենք»:

Ներկայ կացութեան համար աշ-
խարհ ո՛չ յոռետես ոչ ալ լաւատես
ըլլալու պէտք ունի: «Մեզ փորձու-
թեան մի տանիր, այլ միզ չարէն ազա-
տէ», աղօթքի կը կարօտի աշխարհը:

Հսկայ մտքեր, որոնք կրնան առաջ-
նորդել մարդկութիւնը լոյսի եւ ճշմար-
տութեան լուսաճաճանչ շաւիղներու,
գիշեր ցորեկ միջոցներու վրայ կը մտա-
ծեն խոյս տալու համար փալիք, կար-
ծես անխուսափելի, փոթորիկէն: Հեռա-
տես մարդոց սիրտերը սոսկումով կը

բարասին հետեւեալ սարսափներու համար:

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՎԱԽԸ: Հասագոյն ընտանիքները սկսած են դադրիլ բազմաձեւութեւնէ, իսկ ստորին ցեղը և սերունդը ստուար թիւերով կ'աւելնայ: Տաղանդը կը սնանկանայ, անբաղձալի տարրը կը բազմանայ:

ԲՆԱԽՈՍԱԿԱՆ ՎԱԽԸ: Արդի պարագաներու տուկ, մարդ սկսած է դադրիլ ինքնիրեն վրայ մտածելէ, անհատական մտքի սկսած է յաջորդել ամբոխին միտքը: Մարդ կրնայ երեւակահել թէ որքան անգութ և անտրամաբան է ամբոխին միտքը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱԽԸ: Արդեօք ներկայ քաղաքական կազմակերպութիւններու կրնա՞նք վստահիլ թէ՝ վերջնական ապահով միջոցներով պիտի պաշտպանեն անհատական ազատութիւնը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱԽԸ: Արդեօք չպիտի գա՞յ օր մը երբ արդարութիւնները բոլորովին պիտի դադրին մարդկային ըլլալէ և պիտի ըլլան մեքենական:

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱԽԸ: Պատմութիւնը այնպէս կը թուի մեղցոյց տալ թէ քաղաքակրթութիւնը կը ծնի, երիտասարդ կ'ըլլայ, կը ծերանայ և մաշելով կ'աչնչանայ: Արդեօք վախնալու իրաւունք

չ'ունի՞նք որ մեր քաղաքակրթութիւնը իր վախճանին մօտենալու վրայ է:

ՎԱՐՉՍԿԱՆ ՎԱԽԸ: Արեւմտեան քաղաքակրթութեան հաստատութիւնները կարելի չէ՞ որ օր մը այնքա՛ն մեծնան եւ ծաւալ գտնեն որ սկսին մարդկային կարողութիւններու սահմաններէն անդին անցնիլ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԱԽԸ: Այսօրուան մանկութիւնը վաղուան մարդկութիւն պիտի ըլլայ: Այսօրուան երիտասարդութեանց բարոյական, մակարդակը ինչ աստիճանի վրայ օր է, նոյն հիմին վրայ պիտի հիմնուի ապագայ քաղաքակրթութիւնը:

Դալով եզրակացութեան, արեւմտեան կայսրերը բարեկարգութեան աւելի, պէտք ունի վտանգէն փրկուելու: Ասոր միակ միջոցը, աշխարհը այս անլուծելի և անել կացութենէն փրկութեան միակ ճամբան պէտք է փնտռել, Դերմարդկային ճարտարագէտի մը մեծ իմաստութեան և ճարտար վիրաբոյժի մը մեծ գործողութեան մեջ:

Արդ անխառնափելիօրէն կուգանք սա եզրակացութեան թէ աշխարհի յոյսը պէտք է փնտռել իրմէ դուրս, ուրիշ խօսքով պէտք ունի աւելի զօրաւոր գերմարդկային հոգեւոր Աստուածային մեծ ոյժի մը: Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲՆՈՒԹԻՒՆ

Թիք Րիչըր՝ս Տայնքս ամառգիրը Մարդկային Բնութիւն խորագրով յօդուածներ կ'արտատպէ ամփոփաբար Strategy in handling people գրքէն: Երկրորդ անգամ ըլլալով յիշեալ թերթէն կը քաղենք յօդուած մ'եւ, զոր կը ներկայացնենք Նոր Աւետարեի ընթերցողներուն ուշադրութեան:

Թրգմէ. ***

Աւելի թէ Հասքըր, Մ. Նահանգաց Նաւային Փոխադրութեան Վարչութեան Նախկին Նախագահը, և միլիթանալէր վաճառականական միջնորդ մը, ինքզինքը իրեն հակառակող վարչական մարմնի մը ներկայացնելու ատեն սա խօսքերով սկսած է. «Տիարք, գործ» է վաճառականական ծանուցումներ ընել և եւ չրհայ մըն եմ. աստի լաւ կ'ընէք

եթէ զիս աւելի մօտէն դիտէք»

Քու մասիդ կասակ մը կամ ֆենադասու-
քիւն մը՝ յաճախ ազդու միջոց մըն է քարե-
հաճ ուշադրութիւն գրաւելու և հակառա-
կութիւնը զինաքափ ընելու համար:

Հեղինանքն ևւս երեսին տրուած
հարուածի մը չտփ ջախջախիչ ազդե-
ցութիւն մը կրնայ աւնենալ: Յայտնի
խմբագիր Հորէյս Կրիլի այս կերպով
անգամ մը պարտութեան մատնեց բար-
կաջողութեան քաղաքագէտ մը, որ իր քովը
գալով կատաղի կերպով կը քննադատէր
զինքը զեղծարար կոչելով որոշ տոմս մը
պաշտպանած չըլլալուն համար: Պո-
լիտիկոսը զինքը մեղադրեց իբր իր
կուսակցութեան դէմ դաւաճանող մը,
և թէ՛ կուսակցութեան և թէ՛ քաղաքին
կործանումին աշխատող մէկը: Կրիլի,
որ քաղաքագէտին ներս մտած պահուն
կը գրէր, հանդարտօրէն շարունակեց
գրել: Այցելուն իր այսպէս ուշադրու-
թեան առարկայ չըլլալուն համար աւե-
լի վայրացած՝ սկսաւ աւելի բարձր պո-
ռալ, պզտիկ սենեակին մէջ շրջան մը
ըրաւ, դարձեալ գրասենեակին մօտենա-
լով իր խօսքը անգամ մ'ալ կրկնեց:
Այս դործողութիւնը երկու անգամ կա-
տարեց, և առկայ խմբագիրը առանց
ազդուելու շարունակեց գրել: Իր բար-
կութիւնը և խօսքը սպառած ըլլալով,
վերջապէս դուռը բացաւ մեկնելու հա-
մար: Այն ատեն խմբագիրը զաղբեցաւ
գրելէ, և աւսերուն վրայէն մանկունակ
ժպիտով մը մեղմօրէն ըսաւ. «Մի՛ եր-
թաք, մի՛ երթաք. ես եկէք և ձեր միտքը
պարսպեցիք»:

Ուրիշըմ Ռիկլի երբ իբր ծախող
նոր սկսած էր վաճառականական կեան-
քին, դիւրութեամբ յաջողեցաւ յարա-
բերութիւն մշակել խիստ և դժուարա-
հաճ վաճառականի մը հետ, զոր ուրիշ-
ներ սարսափելի գտած էին: Բայց ին-
քը այս մարդէն շատ ապապրանքներ
ոտացաւ և անոր տեական բարեկամուչ

թիւնը շահեցաւ՝ սա մէկ կէտը նկատի
առած ըլլալուն համար, զոր ուրիշներ
անտեսած էին: Այս վաճառականը առ-
տուն կանախ գործի սկսելու սաստիկ
սէրն ունէր: Ռիկլի ամէն օր վաճառա-
կանէն առաջ անոր մթերանոցը կը հաս-
նէր և պաշտօնատան դռներն առջև
զայն կը բարեւէր: Մեծաքանակ առե-
տուրի վաճառականը շատ զոհ մնաց
տեսնելով որ իր սիրած մէկ սովորու-
թիւնը այսպէս նկատի կ'առնուի:

Անթոնի Տիմօք, որ հազիւ 30 տարի-
քին թեւակոխած միլիոնէր եղաւ, պաշ-
տօնատան մը մէջ իբր հասարակ պաշ-
տոնեայ մը գործած շրջանին Սիթի
Պէնք ավ Նիւ Եօրք անուն դրամատան
նախագահին, Մր. Թէյլըրի, կը դիմէ
երկաթուղիի բաժնեթուղթ մը ծախե-
լու: Երբ կը ներկայանայ՝ Մր. Թէյլը-
րի քով կը տեսնէ մէկը, որուն կ'ըսէր
նախագահը. «Բուն կէտին եկուք, բուն
ըսելիքդ ըսէ»։ Եւ մէկ վայրկեան հտքը
իր գլուխը շարժելով կ'արձակէ զայն և
Տիմօքը կը հրաւիրէ, որ բաժնեթուղթը
գրասենեակին վրայ դնելով կ'ըսէ. «Ին-
չըսուն երեք»։ Թէյլըր Տիմօքի կը նա-
յի զարմացած, և իր փոխգիրի տետրը
հանելով «անո՞նը», կը հարցնէ. «Մր.
Պէնք» կը պատասխանէ Տիմօք: Եւ
փոխգիրը լեցնելով կուտայ անոր նո-
րեն հարցնելով, «Մր. Պէնք ի՞նչ կը
վճարէ քեզի»։ «Հարիւրին մէկ քա-
ռորդ»։ «Ըսէ իրեն որ ասիկայ չի բա-
ւեր, ես քեզի հարիւրին մէկ վճարեցի,
և եթէ ինքը նոյնը չի վճարեր ես իրեն
տեղ կը վճարեմ»։

Տիմօք բաժնեթուղթը ծախեց. բայց
ասկէ աւելին ըրաւ, անիկայ դրամա-
տան նախագահին ուշադրութիւնը գը-
րաւեց, քանզի նախագահը կարճ խօ-
սելէ կ'ախորժէր և խօսքերը կ'արհա-
մարհէր, և Տիմօք լակոնական ոճ գոր-
ծածեց, որմէ Թէյլըր հոճոյք զգաց:

Ուրիշ մարդոց փափաքները, նոյնիսկ չըն-

ԻՆՉ ԳԻՏԵՆՔ ՏԻԵԶԵՐՔԻ ՄԱՍԻՆ

Յաճախ սա հարցումը կը յանկերգը-
ուի ի փիւռս աշխարհի թէ՛ ի՞նչ կրնայ
ըլլալ այս անսահման տիեզերքը որու
մէջ կ'ապրինք: Սարսուռ մը կ'զգանք
երբ դիտենք արեւը իւր մոլորակներով
և արճանեակներով, և միլիոնաւոր հա-
մաստեղութիւնները, և մեր աշխարհը
բազմատենք անոնց հետ:

Այս անսահման տիեզերքը ի՞նչ է,
ինչպէ՞ս սկսաւ իր գոյութիւնը և կամ
ի՞նչ է մարդս այս վիթխարի ովկիանին
մէջ: Խորքին հարցումներ, չատգծուար
պատասխանելու:

Մարմինները կրնան գործարանաւոր
և կամ անգործարանաւոր ըլլալ: Զոր
օրինակ, ժայռերը անգործարանաւոր
են: Երբ անսահման միջոցը դիտենք,
անգործարանաւոր տիեզերք մը կը
գտնենք: Յարդ երբեք փաստեր գըտ-
նուած չէ այդ միջոցին մէջ գործարանա-
ւոր մարմիններու գոյութեան մասին:
Սակայն հոս երկրիս վրայ, կը գտնենք
ամէն տեսակ գործարանաւոր մարմին-
ներ որոնք իրենց նմանը արտադրելու
կարողութիւնն ունին: Հազարաւոր սի-
րունդներ հողը, ասոնցմէ մէկ տեսա-
կին մէջ իմացականութիւն ստեղծուած
է որ եզական է բոլոր տիեզերքին մէջ:
Մարդս է որ այս իմացականութիւնը ռե-
նի, որու շնորհիւ նա կը թափանցէ մի-
ջոցին մէջ՝ բացատրութիւն մը գտնելու
այս անսահման օվկէանին:

Նկատի ունենալու ենք որ մարդկա-
յին իմացականութիւնը տակաւին նոր
մարդուս մէջ ներմուծուած է, և երկրիս
վրայ ապրող միւս բոլոր արարածները

իմացականութենէ զուրկ են: Հակառակ
գերութեան սանձարձակ յառաջ խա-
ղացման, և հակառակ մեր ստեղծած
հազարաւոր գիւտերուն մենք տակաւին
մառախլապատ մշուշի մէջ ենք և արշա-
լոյսը տակաւին նոր կը բացուի: Մենք
չենք գիտեր թէ մեր երկրէն դուրս այս
երկրի շուրջաւոր մարմիններով ի տիեզեր-
քին մէջ կեանք կա՞յ, և կամ մեզի նման
իմացականութիւն ունեցող մարդի՞կ
կա՞ն: Ահաւասիկ այս մեր տգիտու-
թիւնը կը ցուցնէ: Մենք կը նմանինք
Արաբիոյ անապատին խորը ապրող ցե-
ղի մը որ երբեք չի գիտեր թէ՛ իր շուր-
ջը բազմաթիւ ժողովուրդներ կ'ապրին:

Դարերէ ի վեր մարդութիւնը այս
հարցերով հետաքրքրուած է և շատ ջա-
նացած է առնուց պատասխանել: Պըտ-
ղոմէոս՝ երկրորդ դարու աստղագէտ մը՝
կը կարծէր թէ աշխարհս տիեզերքի՝
կեդրոնն է: 300 տարիներ առաջ էր որ
միայն Կալիլիօ հաստատեց թէ՛ աշխար-
հը արեւուն շուրջը կը դառնայ և կար-
ծեց որ արեւը տիեզերքի կեդրոնն է:
Հարիւր տարի առաջ աստղագէտներ կը
հաւատային թէ՛ տիեզերքի մէջ միլիո-
նաւոր արեւներ կան, մոլորակներով
շրջապատուած, որոնցմէ ոմանց մէջ
կեանքի գոյութիւնը հաւանական է:
Այժմ մենք կը հաւատանք թէ՛ կեանքը
չատ հազուադիւս է տիեզերքի մէջ եւ
չենք գիտեր երկնային մարմին մը որ
յարմար ըլլայ ապրելու, ի բացառեալ
այն մոլորակներէն որոնք արեւուն
շուրջ կը դառնան:

Ուստի կը տեսնենք որ մենք՝ մահ-
կանացուներս նստուած ենք տիեզերքի
մէկ անսահման խորը, անսահմանօրէն
ընդարձակ ժամանակի, միջոցի և օյժի
օվկէանոսի մը մէջ: Մեր դարերը չըն-
չին ժամանակամիջոցներ են երբ զա-

չին բաներու մեջ, ստիպելով եւ զանոնք գո-
հացնելով կրնանք անոնց թե՛ ուշադրութիւնը
եւ թե՛ քաղցրահամութիւնը շահիլ:

նոնք աստղագիտական չափերու (արի-
ւուն և երկրի միջև եղած հեռավորու-
թիւնը) հետ բաղդատենք: Զոր օրի-
նակ մեր աշխարհը 20 միլիոն դարե-
րէ ի վեր արեւուն շուրջ կը դառնայ:
Իսկ մարդը կէս միլիոն տարիներէ
ի վեր նկատուած է աչքառու արա-
րածը աշխարհի վրայ: Բայց ասկէ հա-
զիւ 3000 տարիներ առաջ էր որ մարդ
կրցաւ հասկնալ թէ իր ապրած երկիրը,
օդին մէջ արեւուն շուրջ կը դառնայ:
Ասկէ 440 տարիներ առաջ էր որ Գոլոմ-
պոս մը հասկցաւ որ աշխարհը կ'ընդ-
եւ ասկէ միայն 150 տարի առաջ էր որ
կալիլէոս փաստեց թէ՝ աշխարհը տիե-
զերքի կեդրոնը չէ: Մենք տակաւին
նոր սկսած ենք գիտութիւն ածբարեւ
երկնային մարմիններու շուրջ:

Կ'ըսենք թէ՝ աշխարհը արեւուն
շուրջ կը դառնայ. սակայն չենք գիտեր
թէ մենք ո՛ւր կ'երթանք, և որքան
ժամանակ պիտի երթանք, և կամ ին-
չո՞ւ: Ի՞նչ կ'արժէ մեր արեւը երբ
Յարգոգի ձառնապարհին 30000 միլիոն
աստղերուն հետ բաղդատենք զայն:
Իսկ որչա՞փ չնչին է մեր աշխարհը բաղ-
դատմամբ այս վիթխարի և միլիոնաւոր
արեւներուն:

Սակայն խնդիրը ասրբեր փութի մը
մէջ մտաւ երբ աստղագէտք հեռագի-
տակներով սկսան միջոցին խորութիւնը
քննել: Մինչեւ հիմա կը կարծէինք թէ
մեր տիեզերքը կը բաղկանար միայն
Յարգոգի ձառնապարհի կամ Միլկաթին
կոչուած երկնային մարմիններու հա-
ւաքածոյէն: Բայց հսկայ հեռագիտակ-
ներ երեւան հանեցին թէ բազմաթիւ
Միլկաթիններ, այսինքն նոր տիեզերք-
ներ կան: Արդեօք վերջ մը ունէ՞ր ա-
տիկա:

Այս հազարաւոր տիեզերքները 100
մատնաչափ արամագիծ ունեցող հեռա-
գիտակով գտնուած են: Բայց այժմ
200 մատնաչափ արամագիծ ունեցող

ուրիշ հեռագիտակ մը կը շինուի ու մի-
լիոնաւոր տիեզերքներու գոյութիւնը
պիտի ապացուցանէ: Ուստի երբ երե-
ւակայինք այս անսահման միջոցը՝ ար-
հաւիրքով մը կը լեցուինք: Ահաւասիկ
այս կէտն ալ մարդուս տգիտութիւնը
կը ցուցնէ որովհետեւ ան տակաւին չի
գիտեր միջոց բառին նշանակութիւնը:

Մեր միջավայրին, մեր հարեան տիե-
զերքներուն մասին նոր սկսած ենք գի-
տակցիլ, և այս մեզ կը մղէ խոնարհ ըլ-
լալու: Սա հարցումը մեզի կը ներկա-
յանայ թէ աշխարհս ինչպէ՞ս ծագու-
ած է: Շատ հաւանական կը թուի
որ երկրիլիոնաւոր դարեր առաջ, երբ
վիթխարի աստղ մը կը պտտէր միջո-
ցին մէջ, այնքան մօտը կուգայ արեւուն
որ իր ահագին ձգողական ոյժը պատ-
ճառ կ'ըլլայ որ վիթխարի և հրաշէկ
զանգուածներ արեւէն պոկուելով նետ-
ուին միջոցին մէջ: Այս զանգուածնե-
րը այսինքն ինը մոլորակները բնագի-
տական օրէնքներու հետեւելով և աս-
տիճանաբար պաղելով կ'առնեն իրենց
ներկայ վիճակը:

Ուստի մոլորակներուն յատկութիւն-
ները ուսանելով կրնանք ուրիշ երկնա-
յին մարմիններու վրայ ալ մեծ մասամբ
ճշգրիտ տեղեկութիւն ունենալ:

Ստորև իւրաքանչիւր մոլորակ զատ
զատ պիտի առնենք և անոնց վրայ պի-
տի խօսինք: Իսկ յետոյ սա հարցման
պիտի պատասխանենք թէ՝ կրնա՞նք
միւս մոլորակներուն հետ հաղորդակ-
ցութեան մէջ մտնել:

(Շարունակելի)

Ա. Գ. ՀԱՅԿ ՓՈԼԱՏԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԹԵԱՆ ՄՐԱՌԹԻՒ

Շատ ցաւալի է որ «Րահնիւմա» ի համար կարելի եղած չէ իր հրատարակումը շարունակել գրամական զօրութեանց պատճառաւ: Վերջին 10 տարուան միջոցին անոր հրատարակումը շատերուն համար պաղտնիք մըն էր արդէն: «Րահնիւմա» ն կրցաւ այսքան հրկար առին հրատարակուիլ մի միայն փրօֆ. Յ. Գրիգորեանի հաստատամտութեան և ջանքին ու կարգ մը բարեկամներու զոհողութեան շնորհիւ: Անոր տեղը այսօր պարագ է. տաճկախօս աւետարանականները մանաւանդ պէտք ունին անոր պատգամին աւելի քան հրեք: Բայց ուրախալի է որ Փրօֆ. Գրիգորեան ձեռնարկած է շարք մը զբոսայգիներու հրատարակութեան, որով պիտի կրնայ «Րահնիւմա» ով կատարելիք իր ծառայութեան կարեւոր մէկ մասը ընել: Այս ձեռնարկը շատ օրհնաբեր և ամէն կերպով քաջալերութեան արժանի է: Անշուշտ բարեբախտութիւն մ'է, մանաւանդ ներկայիս, կենսական կարգ մը հարցերու մասին մեր յարգելի փրօֆէսորին գաղափարները ունենալ ամփոփ ձեւով մը, որ տեւական ծնալու առաւելութիւնն ևս ունի:

Փրօֆ. Յ. Գրիգորեանի առաջին զբոսայգի «Ներշնչում» խորագրով, հրատարակուած է ընտիր թուղթով և մաքուր տպագրութեամբ և կը բաղկանայ 63 էջերէ: Հեղինակը հոն կը խօսի Ս. Դրքի ներշնչումին, Յիսուսի ներշնչումին, Աստուծոյ ներշնչումին և հրաշքներուն մասին: «Րահնիւմա» ի ընթերցողները բաւական չափով տեղեկակ են հեղինակին գաղափարներուն: Այս անգամ զանաք պիտի գտնեն տրամաբանական շարքով ամփոփուած հատորիկի մը ձեւով, զոր մասնաւոր կերպով կը յանձնարարենք մեր քարոզիչներուն և ժողովուրդին: Զայն կը յանձնարա-

րենք կրօնական հարցերով հետաքրքրուող անձերու, մանաւանդ նոր կրօնական դժուարութեանց առջեւ շուարած մեր անկեղծ երիտասարդներուն: Եւ հաստատ ենք թէ անոր մէջ պիտի գըտնեն որքան վստահելի, հաւասարակշիռ պահպանողական նոյնքան ևս յառաջդիմական տռաջնորդ մը:

Գրքոյի զինը Ամերիկայի թերեւ կրնայ յարմար ըլլալ, բայց մեր կողմերուն համար բարձր է: Կ'ակնկալենք որ հեղինակը կարեւոր փոփոխութիւն մը կ'ընէ այս մասին:

Ջանաք Փրօֆ. Յ. Գրիգորեանի հատուկ ենէն և փորձառութենէն օգտուել, քանի առիթ ունինք: Այս ընելով հեղինակը քաջալերած կ'ըլլանք որ իշ նման զբոսայգիներու հրատարակութեան:

Շատ լաւ պիտի ըլլար եթէ գրամական աղբիւր մը գտնուէր, որպէսզի «Ներշնչում» հայերէն լեզուով ևս հրատարակուէր:

Մայիս 1

Զ. Ա. Պէզեհան

Պէյրուս

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՍԻՆԱԿ

ԽՆԴՐԱՆՔՍ

Տէ՛ր խմբագիր,

Անխտիր բոլոր հոգեւոր թերթերը ինծի համար շատ թանկագին եղած են այն օրէն ի վեր երբ ևս վեցստին ծնունդի փորձառութիւնը աւնեցայ: «Նոր Աւետարեք» ն ալ ինծի համար նոյնչափ հաճելի և թանկագին եղած է: Անհամբեր կ'սպասեմ նոր թիւի գալուն և մեծ փափաքով ալ կը կարգամ զայն: Ինքզինքս հարկադրուած կ'զգամ խոստովանելու թէ անոր շատ մը յօդուածներէն հոգիս համար սնունդ առած եմ: Կ'ուզեմ այս երկտողովս սա խնդիրքը ներկայացնել:

1. Կարելի չէ՞ որ մի քանի էջեր յատկացուն ուղղակի հոգեւոր կեանքի մասին խօսող յօդուածներու: Մեր հովիւներն աւ քարոզիչները, գրելու կարող հոգեւորները կրնան թերթի միջոցաւ մեզի խօսիլ: Անշուշտ շնորհակալ ենք մինչև հիմա այս ուղղութեամբ եղած ջանքերուն համար: Բայց ասկէ աւելիի պէտքը կ'զգանք: Մեր սիրելի հովիւներէն և քարոզիչներէն կը խընդրեմ որ Աստուծոյ խօսքովը սնուցանեն հոգիները:

2. Արդեօք կարելի չէ՞, դարձեալ, որ մեր հոգեւոր եղբայրներու և քոյրերու վկայութիւնները տեսնուին «Նոր Աւետարներ» ի մէջ: Անշուշտ ասոնցմէ ոմանք դիւրութեամբ ուրիշներ մեծ տառապանքներէ ետքը Բրիտանիոյ գլխաւոր աւանդական եկեղեցիէն իր այս մասին ունեցած փորձառութիւնը պատմէ՝ շատերուն համար մեծ բարիք մը ըրած կ'ըլլան լուսաւորելով, քաջալերելով ուրիշ շատ մը կորուսեալները, որոնք կը ճգնին ելք մը գտնել: Իսկ հոգեւորները մեծապէս կ'ուրախանան կարգաւորվ գտնոնք և Աստուծոյ փառք կուտան անոնց համար:

3. «Նոր Աւետարներ» ի ընթերցողներէն ալ կը խնդրեմ որ թերթը կարդան անկէ իրենց հոգիներուն համար սնունդ առնելու բաղձանքով, և յուսով եւ որ ատոք հասկեր շատ պիտի գտնեն անոր մէջ:

Եղբայրական սիրով
Պէյրուս Թարութիւն Ա. Վասոյեան

ՀԱՅ ԿԵԱՆՔ

Ս. ԳՐԻԳՈՐ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ Նոր Թարգմանութեան վրայ «Միոն» իր Մայիսի թիւին խմբագրականին մէջ կ'առաջարկէ ներկայ Գրաբար Ս. Գիրքը աշ-

խարհաբարի վերածել, «հայերէն ձեռագիրներու համեմատութեամբ և առաջնորդութեամբ Եօթանասնիցին», և լուսանցքներուն մէջ կամ էջերուն վրայ ստորեւ նշանակուածը երբայականի տարբերութիւններուն: Բայց պէտք է հոս ըսել թէ աշխարհաբար առաջին թարգմանութիւնը կատարուած է նախաձեռնութեամբ Բրիտանական Ս. Գլխաւոր ընկերութեան և Զօհրապ անուն հիմուտ հայկաբանի կողմէ 1821ին, տըպուած Փարիզ 1825ին, և ոչ թէ Վենետիկ միսիոնարի մը միջոցաւ 1828ին Պալատայ բառարանով, ինչպէս որ կ'ըսէ «Միոն» (See Encyclopaedia of Missions):

ՀԱԼԷՊ

ԷՄՄԱՆՈՒԷԼ Հայ Աւետ. Եկեղեցիին Ապրիլ 24, Կիրակի կէսօրէ ետքը առինքնող պաշտամունք մ'աւանդաւ: Մատակասքարցի Թրանսական զինուորներէն չորս հոգի եկեղեցիի անդամ ընդունուեցան, զինուոր մը մկրտուեցաւ և ապա 12 զինուոր Ս. հաղորդութեան տեղանին մասնակցեցան: Այս բոլորը կատարուեցաւ Փրանսացի զինուորական փաթէօրի միջոցաւ: 20 մատակասքարցի զինուորներ մասնակցեցան այս պաշտամունքին:

Էմմանուէլ Եկեղեցիի դպրոցին հոգաբարձութիւնը յայտնի երաժիշտ Միշէլ Պարիսէնքօյի ղեկավարութեամբ նուագահանդէս մը սարքեց Մայիս 11ի գիշերը. հակառակ տնտեսական սուր տագնապի սրահը գրեթէ լեցուած էր հանդիսականներով, որոնք գեղարուեստական հաճելի երեկոյթ մը վայելեցին: Հանդէսին հասոյթը դպրոցի այս տարուան բացին յատկացուած է:

ՎԵՐ. Ս. ԱՂՊԱՊԵԱՆ, Հալէպի Էմմանուէլ Աւետ. Եկեղեցիի հրաւերը ընդունած ըլլալով, Մայիս 11ի իրիկունը ընտանեօք հոս եկաւ Կիպրոսէ, ուր տարիներէ իվեր Հայ Երիցական Եկեղեցիին

մէջ հովուական պաշտօն կը կատարէր։ Վեր. Աղպապեան Տարսոնի Գոլէճէն ուսումնաւարտ է և իր աստուածաբանական ուսումը առած է Մարաշ, Տր. Ֆ. Կուստէլէ և Վեր. Կ. Յարութիւնեանէ։ Դպրոցէն ելլելէ անմիջապէս հաջորդ Մարաշի Բ. Աւետ. Եկեղեցիի հովուութիւնը ստանձնած է, զոր շարունակած է Պատերազմի միջոցին։ Կիլիկիոյ պարպուժով անցած է Կիպրոս, ուր հովու ձեռնադրուած է։ Վեր. Սիրական տնուշ ձայնով, շնորհալի երեսօյնով, հոգևոր փորձառութեան տէր առողջադատ գործիչ մըն է։ Իր առաջին պաշտամունքը կատարեց Մայիս 12ին։ Սովորականէն մեծ թիւով ժողովուրդ մը ներկայ եղած էր, ջերմեռանդ աղօթքներ եղան, յայտնի էր թէ հոգևոր տաք մթնոլորտ մը յառաջ եկած էր։ Վեր. Կ. Յարութիւնեան, որ հայրական աղօթք մը ըրաւ իր սանին օրհնաբեր ծառայութեան համար, պաշտամունքէն վերջը համբուրեց նոր հովիւը, և Տիկ. Աղպապեան համբուրեց Վեր. Յարութիւնեանի ձեռքը։ Բոլոր ժողովուրդը անոյ յայտարարութեամբ բաժնուեցան։ Մենք բարի գալուստ կը մաղթենք և Ս. Հոգւոյն առաջնորդութիւնը կը խընդրենք Աստուծոյ։

ՀԱԼԷՊԻ մէջ նորակազմ հրդորդ Հայ. Աւետ. Եկեղեցին կոչուած է Նահատակաց Հայ ժողովական Եկեղեցի, որ առայժմ սեպհական շէնքէ զուրկ ըլլալով կը գործածէ Նիզիպիւսի թանգարանի մէկ սրահը։ Թարածուն ժողովուրդին անբաւարար ըլլալով սրահս, պաշտամունքները կը կատարուին բակին մէջ։ Եկեղեցին՝ սրահի վարձք և ուրիշ բոլոր ծախքերը հոգալէ զատ ձեռնարկած է իր մէջէն շէնքի համար հանգանակութեան։ Շատ մը անհատներ հոգևոր տուրքի նման շէնքի կանոնաւոր տուրք գրուած են, և կանոնաւոր կերպով կը վճարեն պարբերաբար։

ՓՐՈՖ. ԱԼԵԿՍԱՆ Յ. ՊԵՋՃԵԱՆԻ, Այնթապի նախկին Գոլէճի ուսուցչական տիպի և տպեալ գրութիւնները և կենսագրականը պարունակող գիրքը, զոր դասաւորած է Փրոֆ. Զ. Ա. Պէզճեան, մամուլի յանձնուած է և ուրախ ենք որ մօտ օրէն լոյս պիտի ելլէ։ Վեր. Ֆ. Կրիւն, զաւակը Կ. Պոլսոյ «Աւետարեք» ի խմբագիր Տր. Ճ. Բ. Կրիւնի, Հալէպ հանդիպեցաւ Մայիսի առաջին շաբաթը։ Խօսեցաւ Ամերիկեան Գոլէճի մէջ, Էմմանուէլ և Բեթէլ Հայ Աւետ. Եկեղեցիներուն մէջ։ Մր. Ֆ. Կրիւն Պրուսա ծնած է 1863 ին, կը խօսի սահուն հայերէն և թրքերէն։ Վան գտնուած է 1890—4 ին։ 1888 ին Իէյլի Աստուածաբանական դպրոցին մէջ իրեն ընկեր ունեցած է Վեր. Մ. Կ. Փափաղեանը։ Սասունի ջարդէն անմիջապէս հաջորդ, 1895 ին հրատարակած է «Թուրքիոյ Իշխանութիւնը» անունով գիրքը, Մր. Կլէտսթոնի յառաջաբանով և սպառած է 22000 օրինակ Անգլիոյ և Ամերիկայի մէջ։ Հայերու համակիր և Թուրքերու բոլորովին անպաշտ գիրքը պատճառ կ'ըլլայ որ Թուրքիայէն հեռանայ։ Աշխատակցած է իր հօրը մէկ գրքին Leavening the Levant, հրատարակուած 1916 ին. ասիկայ գրեթէ Մ. Արեւելքի մէջ Պորտի յիսնամեայ մէկ պատմութիւնն է։

Մր. Կրիւն ուսումնասիրական երկար ճամբորդութեան մը մէջ կը զբոսնուի։ Այցելած է Ժաքոն, Գորէա, Մանչուրիա, Չինաստան, Եւրոպայի և Փէրին, Շանհայի և Շանհայ քաղաքները, վերջինին մէջ տեսնուած է իր բժիշկ զաւակին, Տօքթ. Ֆիլիփս Կրիւնի հետ, որ պէտք է տեղւոյն Ամերիկեան Բժշկական Վարժարանին և Հիւանդանոցին։ Հանդիպած է ծովա կղզիին, որուն Սուրապայա քաղաքին մէջ մեծագոյն օթեանը, Հօթէլ Օրանթ, Հայու մը կը պատկանի։ Թէ՛ հոս և թէ՛

Հնդկաստան, Կալկաթա, Հայերու հետ տեսնուած է ուրախանալով անոնց հարստութեան համար: Գովեստով կը խօսի Կալկաթայի Հայ Գոլէճին մասին, Հայոց եկեղեցիին մեծ եկամուտը զարմանք պատճառած է իրեն: Իրաքէն անցնելով հոս գալէ ետք կը փափաքի Թուրքիա և Ռուսիա ևս ուղեւորիլ: Իր մեծ ուրախութիւնը կը յայտնէ Սուրիոյ մէջ Հայերուն յաջողութեան համար, զոր անակնկալ գտած է:

ՊԱՏ. Կ. Ս. ՖԱՐԱՃԵԱՆ Սելանիկէն մեզի կը հաղորդէ որ ներգաղթի Գ. կարաւանը Ապրիլ 26, Կիրակի իրիկուան ժամը 5 ին մեկնած է դէպի Պաթում Բէյի Բորսո նաւով: 1522 անձեր (360 ընտանիք) Շաբաթ օր իրենց գոյքերով տեղաւորուած են նաւուն մէջ, իրենց հետ տանելով 2 մեծ բեռնատար օթօններ, բազմաթիւ հեծելանիւններ, նոյնիսկ այծեր և հաւեր: Գաղթողներու մէջ գտնուած են 30 աւետարանական Հայեր, որոնց 6ը Ե. Բ. Զանիցի և երգչախումբի անդամներ: Ազգականներու, բարեկամներու, Հայ և օտար պաշտօնական դէմքերու և ներկայացուցիչներու խումբերամ բազմութիւն մը քարափը լեցուցած են, մեկնումը եղած է շատ խանդավառ միեւնոյն ատեն յուզիչ:

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻԻՆԸ մեզի զրկած զեկոյցովը պաշտօնապէս կը յայտնէ Վսեմ. Տ. Գ. Կիւլպէնկեանի նախագահութենէ հրաժարումը, Միութեան ուղղուած անհարկի տրտունջներու և պահանջներու, և մանաւանդ «Երեւանի մէջ մի քանի ամիս առաջ իրեն ուղղուած և չհերքուած բացարձակապէս անհիմն վերագրումներու» պատճառաւ, որոնք դառնօրէն վիրաւորած են իր սիրտը: Կեդր. Վարչ. Ժողովը բողոքադիւր մը կը զրկէ Երեւան, և նամակով կը խնդրէ Կիւլպէնկեանէ որ շարունակէ իր պաշտօնը:

Դիւանի զրկած երկրորդ մէկ գրութենէն կը հասկնանք թէ Թէլ-Պրաքի (Սուրիա, Ճէզիրէ) կողմերը 130 ընտանիք քրդախօս Հայերու համար շինուած երկու գիւղերը տիրող երաշտի պատճառաւ մեծ դժուարութեան մէջ լինկած և ժողովուրդը խուճապի մատնուելով ցրուելու սկսած են: Նանսէնեան Միջազգային Օֆիսին կատարուած զիմումին վրայ, վերջինս որոշած է քարէ թումբի շինութեան մասին, և ներկայ դրութիւնը բարւոքելու համար պէտք եղած միջոցները ցուցնող քննութեան մասին Մ. Պիւրնիյէի յանձնարարել:

ՄԱՅԻՍԻ ՍԿԻՉԲԸ Պէյրութի մէջ տեղի ունեցաւ Միացեալ Միախնարական Խորհուրդի Սուրիոյ Բաժնին ժողովը, որուն մասնակցեցան Սուրիոյ և Լիբանանի Հայ Աւետ. Միութեան կողմէ Վեր. Վեր. Ս. Մանուկեան, Ե. Հատիտեան, Ն. Սարեան, Ե. Կէօքկէօզեան: Վերջինիս այս մասին զրկած տեղեկագիրը յաջորդով պիտի տրուի:

ՀԱՅԵՐ ԹՈՒՐԿԻՈՅ ՄԷՋ.—Երթեկի նոր կանոնագրութեամբ ոչ-Թուրքերը ազատ ըլլալով քաղաքէ քաղաք երթալ, Հայ մը իր տեղէն ուրիշ քաղաք մը երթալով այդ տեղի իր մէկ արժէքաւոր կալուածը—որ իրը լքեալ գոյք ծախուած էր—ստանալու համար դատ բացած, և գատարանը իրեն նպաստաւոր վճիռ տուած է:

Սանտարեան Խանի սեպհականութեան համար, Կ. Պոլսոյ մէջ, Պատրիարքարանի և քաղաքապետութեան միջեւ հրեք ու կէս տարիէ ի վեր տեւող դատը շահած է Պատրիարքարանը Հուգուգի Բ. դատարանի մէջ: Յուսալի է վճարեկ Ատեանի նպաստաւոր վճիռն ևս:

Պէյրութի «Ժողովուրդ»ը նամակէ մը քաղելով կը գրէ թէ Ետզկատի Նոր կուսակալը Թուրքերը կը գրգէ Հայերը տանջելու համար Պողազլեանի մէջ:

FURST MCNESS Ի ԱՌՈՂ-ԶԱՊԱՀԱԿԱՆ

ԲԻՄԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նշանաւոր են իրենց մաքրութեամբն ու շինիչ ազդեցութեամբը,

ուստի

անարիւններ, տկարներ, հիւանդութենէ և վիրաբուժական գործողութենէ
նոր ապաքինողներ, պէտք է գործածեն**Furst mcness'****EXTRACT OF COD LIVER OIL TONIC**Կոչուած բաղադրութիւնը, որ կը պարունակէ մաքուր ձկան լուր (կենսահիւթ
«Ա» և «Դ»), մալթ, վայրի կեռաս, քինին, ընտիր գինի, երկաթ, մանկանէզ,
և այլն:Մեծապէս Ա.ԽՈՐԺԱՀԱՄ Է, ԱՐԻԻՆԻ ԿԱՐՄԻՐ ԳՆԴԻԿՆԵՐԸ ԿԸ ԶՕՐԱՑՆԷ
ընդհանուր ՄԱՐՄՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ Կ'ՈՒԺՈՎՑՆԷ:**ՀԱՋ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՆՈՒԿՆԵՐ ԵՒ ԶԱՓԱՀԱՍՆԵՐ**

պէտք է գործածեն

Mcness mentholated cough syrup

Բաղադրութիւնը,

կը պարունակէ զանազան ծառերէ, բոյսերու արմատներէ քաղուած հիւթեր և
մենթոլ:Բորբոսած եւ զրգուած կոկորդի քաղանքներուն վրայ կ'ազդէ, կոկորդը եւ
խոչափողը կը մաքրէ եւ «կ'իւղոսէ»: Ախորժաճամ եւ անուշ է:

ԿԸ ԴՏՆՈՒԻ ԲՈՂՈՐ ՅԱՅՏՆԻ ԴԵՂԱՐԱՆՆԵՐԸ

صاحب الامتياز والمدير المسئول القس ق. هاروتونيان